

նիկու ճանապարհն. և մինն սախզու առջևն. երեքն մտրա ճանապարհն: Այլև սպանեօլի կողմէն կարծեմ ձեր հրամանքն այլ լաւ տեղեակ էք: Այս բանս բաւեցի: Եւ յանձնեմ գանարժանուիս իմ ի մաքրափայլ յաղօթս ձեր. ողջ լերուք տք յիւ:

Գերապայծառ Տեառն
յունան եպիսի հարազատի
սիրով ողջոյն մատուցանեմ

Գերյարքոյուն ձերոյ ծառայ
Յարութիւն եպիսկոպոս
գրցւ 1718 յուլիսի 23 ի վէնէցիայ

ԺԱ.

Պատմութիւնը մեզ կ'աւանդէ որ 1718 յուլիս 21-ին Օսմանցոց և Գերմանացոց միջև հաշտութիւն կը կնքուի Փասսարիփիչի մէջ: Վեննայէն կը զրկուի թաւման կոմսը և Վիրմոնտ իշխանը. իսկ Վենետիկէն Ռուցցինի ասպետը՝ իբր պատուիրակներ ժողովոյն՝ որ կը սկսի յունիս 5-ին և տասներկու նիստերէ վերջ հաշտութեան պայմանները կը հաստատուին:

Արդ, ստորև հրատարակածնիս, որ առանձին թղթի մը վրայ նոտրագիր կը գտնուէր մեր Դիւանի 1718-ի հաւաքածոյին մէջ, ծանօթութիւններ են սոյն ժողովի՝ Վենետիոյ Հասարակապետութեան հետ առնչութիւն ունեցող յօդուածներու մի քանի մասերուն: Թէ ինչո՞ւ մասնաւոր ուշադրութեան առնուած են այն կէտերը. մեզ կը թուի որ նոյն ժամանակի Վենետիոյ կամ հոնկից անցնող Հայ վաճառականներու գործոց դիրութեան ու ձեռնտուութեան համար եղած ըլլայ: Թուղթս ստորագրութիւն չունի, բայց հաւանօրէն Մխիթարայ աշակերտներէն միոյն գործն է:

Ծանօթութիւնք ի վերայ յօդուածոց ինչ Հաշտութեան (այսինքն պարբըր) եղելոյ ի բողոքօվիչ ի 21 յուլիսի 1718 ընդ մէջ սուլթան ահմէտի և վէնէտիկեան Հասարակապետութեան, յորս ճառի յաղագս սուրեառութեան և վաճառականութեան հպատակաց (այսինքն ռայէից) երկոցունց կողմանց, որք առնեն վաճառս յերկրի տէրութեան երկուց կողմանց, որպէս երևի ի յօդուածն ԺԳ. ԺԵ. ԻԵ:

ա. Ապացուցութեամբ գործոյ յայտնի ցուցանի, զի վէնէտիկեցի վաճառականք, ոչ միայն բնակեցեալքն (այսինքն սափին օլանլար) ի բազում ամաց հետէ յերկրի տէրութեան օսմանցուց, այլ նաև որդիք նոցա ծնեալք ի նմին երկրի տէրութեան օսմանցուց, ոչ երբէք ստորագրեցան, և չեն իսկ ստորագրեալ իմիք հարկատուութեան (այսինքն խարածի կամ վէրկիի) ի 1718 թուականէ անտի և այսր: Եւ թէպէտ դաշնագիրն (այսինքն ահտնամէն բողոքօվիչու ի յօդուածն ԺԳ. ենթարկէ խարածի (որ է հարկ ինչ դուզնաքեայ) զայնոսիկ, որք բնակացեալ են (այսինքն սափին օլանլարը) ընդ օսմանցուց տէրութեամբ. սակայն այս հարկ ոչ երբէք պահանջեցաւ ի նոցանէ:

բ. Քսաներորդ յօդուածն բացայայտ դնէ, թէ հպատակք (այսինքն ռայէք) երկուցունց կողմանց որք սուրեառիկ լինին յերկրի տէրութեան երկոցունց կողմանց՝ կարող լիցին սուրեառս և վաճառս առնել ակորորութեամբ և ապահովապէս, առանց ոչորոք աղքել լինելոյ ևնոցա*: Եւ քանզի սովորութիւն անընդհատ հանապազորդեալ՝ ստանայ գուժգնութիւն օրինաց և դաշնադրութեան, սմին իրի օսմանցիի ըռայէ վաճառականաց՝ անաղարտելի իրաւունք ի ճահ պատկանին՝ պահանջելոյ փոխադարձ արդարութեամբ և իրաւամբ, զի հաւասար օրինակաւ վարեցի ընդ նոսա:

* Ընդգծեալք բնագրին կողմանէ են: